

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ | 2021

2021

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ներածական մաս - էջ 3
2. Ամփոփագիր - էջ 4
3. Կատարողականի հաշվեքննության հաշվետվություն - էջ 7
4. Կատարողականի հաշվեքննության արդյունքներ - էջ 9
5. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր - էջ 15
6. Առաջարկություններ - էջ 17
7. Հավելվածներ - էջ 18

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 164-Ա (առաջադրանքի հաստատման մասին) և ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 213-Ա (առաջադրանքի ժամկետների երկարացման մասին) որոշումներ:

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

Հաշվեքննության տեսակը

Կատարողականի

Հաշվեքննության առարկան

Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջան

2019 թվականի հունվարի 1-ից 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Հաշվեքննության կատարման ժամկետը

2020 թվականի սեպտեմբերի 22-ից 2021 թվականի մարտի 31-ը ներառյալ:

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության ISSAI 100 և «ISSAI 300 ստանդարտների համաձայն:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի չորրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Արթուր Բախչազույանը:

2. ԱՄՓՈՓԱԳԻՐ

2.1 Ընդհանուր տեղեկատվություն

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018թ. հունիսի 11-ի թիվ 701-Լ, թիվ 703-Լ և թիվ 705-Լ որոշումներով հաստատվել են Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության¹, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության կանոնադրությունները:

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019թ. հունիսի 1-ի թիվ 661 որոշմամբ, հիմք ընդունելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասը, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2019 թվականի մայիսի 8-ի ՀՕ-31-Ն օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը հաստատվել է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրությունը:

2.2 Հաշվեքննության նպատակը

ՀՀ հաշվեքննիչ պալատն իր 2020 թվականի տարեկան ծրագրի շրջանակներում գնահատել Նախարարության «Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» ծրագրի 2019 թվականի ՀՀ պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության իրագործման արդյունավետությունը:

2.3 Հաշվեքննության խնդիրները

Նախարարության Ծրագրով նախատեսված դրամաշնորհի տրամադրման պայմանագրերով որպես պայմանագրերի առարկա է սահմանվել թանգարանային առարկաների ու հավաքածուների պահպանում, համալրում, հաշվառում, հանրահռչակում, այցերի սպասարկում և այլ գործառույթներ, ինչպես նաև կանխատեսվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշներ: Պայմանագրերով նախատեսված է, որ Պատվիրատուն պարտավոր է Կատարողից ընդունել պատշաճ ձևով ու կարգով կատարված աշխատանքները և հաշվետվությունները, ցուցաբերել մեթոդաբանական և կազմակերպչական օգնություն: Նախարարության կազմում գործող մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության կանոնադրությամբ սահմանված են մի շարք գործառույթներ,

¹ ՀՀ Մշակույթի նախկին նախարարությունը միավորվել է ՀՀ Գիտության և կրթության նախկին նախարարությանը 2019թ. հուլիսին:

որոնցից են՝ թանգարանային հավաքածուների պետական հաշվառման, անձնագրավորման, պահպանության, պաշտպանության, վերականգնման, համալրման, ներկայացման և հանրահոգակման, դրանց ուսումնասիրության և վերլուծության, թանգարանային հավաքածուների կառավարման ապահովելը, պետական թանգարաններում թանգարանային առարկաներին և թանգարանային հավաքածուներին հաղորդակցվելու պայմանակարգը վերահսկելը և այլն: Նշված գործառույթների իրականացման ապահովման համար պայմանագրով սահմանված են Պատվիրատուի իրավունքները՝ ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից պայմանագրի կատարման ընթացքը և որակը, Կատարողից պահանջել ու ստանալ տեղեկույթ պայմանագրի կատարման ընթացքի մասին: Պայմանագրով սահմանված են Կատարողի պարտավորությունները, որոնցից են՝ Պատվիրատուի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի մասին, ներկայացնել ֆինանսական և բովանդակային հաշվետվություններ: Հաշվեքնության խնդիրն է սահմանել այդ գործառույթների իրականացման փաստագրումն ու արդյունավետության գնահատումը:

2.4 Հաշվեքնության շրջանակը

Հաշվեքնության շրջանակներում գնահատել թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ ծրագրային կետի արդյունավետությունը հետևյալ հարցադրումներից ելնելով՝

1. Արդյո՞ք հաշվեքնվող օբյեկտը տիրապետում է Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությանը՝ իր կանոնադրական գործառույթների իրականացման համար:

2. Գնահատել յուրաքանչյուր կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունները որպես ելակետային տվյալներ դիտարկելով համապատասխան կազմակերպության մարդկային ռեսուրսները, ոչ ֆինանսական ցուցանիշների կանխատեսվող և փաստացի մեծությունները և փաստացի ֆինանսավորման չափերը 2017-2019թթ. ժամանակահատվածում:

3. Հաշվեքնվող օբյեկտի ենթակայության թանգարանների կադրային ռեսուրսների մասնագիտական կազմը, վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունները որքանով են ապահովել ոլորտը կարգավորող կանոնադրական խնդիրների լուծումը:

2.5 Հաշվեքնության չափանիշները

Հաշվեքննիչ պալատը գնահատել է Նախարարության և Ծրագրի գործառույթները՝ համադրելով դրանք ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի հետ:

2.6 Հաշվեքնության արդյունքում բացահայտված ամենաէական փաստերն ու դրանց ամփոփ նկարագրությունը

2.6.1 ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից պահանջվել, սակայն Նախարարությունից չեն տրամադրվել՝ 2017-2019թթ. ըստ թանգարանների ոչ ֆինանսական, արդյունքային ցուցանիշ-չափորոշիչների մասով:

2.6.2 Նախարարությունից ստացված տեղեկատվության մեջ առկա են ոչ ամբողջական, թերի կամ ընդամենագրերի սխալ արձանագրման դեպքեր:

2.6.3 ՀՀ ֆինանսների նախարարության 2019թ. թիվ 254-Ն հրամանի և հաշվետվությունների «LSREP» համակարգից ստացված ոչ ֆինանսական տվյալների միջև առկա են անհամապատասխանություններ:

2.6.4 Նախարարության 2017-2019 թթ. ամփոփ ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների դինամիկայի վերլուծության արդյունքում առաջանում են ֆինանսական համամասնությունների անհամապատասխանություններ:

2.6.5 Նախարարության Ծրագրի 2019թ. թանգարանների ըստ տարեսկզբի և տարեվերջի մնացորդների դրամական միջոցների հոսքերում (գործառնական ծախսերի ու եկամուտների մասով) առկա են տարբերություններ և անհամապատասխանություններ:

2.6.6 Նախարարությունից ստացված 2019թ. ամփոփ ֆինանսական ցուցանիշների մասին տեղեկատվության ընդամենագրերի և ՀՀ 2019թ. տարեկան կտրվածքով ՀՀ ֆինանսների նախարարության շտեմարանների ամփոփագրերի առաջանում են տարբերություններ:

2.6.7 Նախարարության ենթակա թվով երկու թանգարաններում արձանագրվել են գնումների գործընթացների մի շարք անհամապատասխանություններ:

2.6.8 Նախարարության ենթակա թվով 15 թանգարաններ թվով 120 աշխատակիցներ 2019թ. ընդհանուր՝ 780 աշխատանքային օրեր բացակայել են հանրապետությունից: Վերջիններիս հաշվարկվել է ընդամենը՝ 4,253,909.6 ՀՀ դրամ աշխատավարձ և կատարվել վճարումներ:

2.6.9 Նախարարության ենթակա թանգարանների թվով 3 հաստիքային աշխատողներ 2019թ. միաժամանակ որպես հիմնական աշխատողներ ամբողջ դրույքով աշխատել են Ծրագրում ընդգրկված երկու տարբեր թանգարաններում:

3. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կատարողականի հաշվեքննության ընթացքում, ըստ հաշվեքննության առարկայի տնտեսման, նպատակային և ծախսային արդյունավետության սկզբունքները գնահատելիս

առանձին սկզբունքները դիտարկելու փոխարեն ավելի նպատակահարմար ընտվեց սկզբունքների միասնական մոտեցումը: Ըստ նշված մոդելի Նախարարությունից ստացված տեղեկատվության հիման վրա իրականացված հաշվեքննության արդյունքում ստացված փաստերի հիման կատարվել են համապատասխան եզրահանգումներ:

3.1 Հաշվեքննության շրջանակներում առանձնացված հարցադրումներից 1-ին հարցադրման մասով փաստվել է, որ Ծրագրի շրջանակներում Նախարարության կազմում գործող Մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության (այսուհետ՝ Վարչություն) կանոնադրությամբ սահմանված են մի շարք գործառույթների, որոնցից են՝ թանգարանային հավաքածուների պետական հաշվառում, անձնագրավորում, պահպանություն, պաշտպանություն, վերականգնում, համալրում, ներկայացում, հանհաճակում, դրանց ուսումնասիրություն և վերլուծություն, թանգարանային հավաքածուների կառավարման ապահովում, պետական թանգարաններում թանգարանային առարկաներին և թանգարանային հավաքածուներին հաղորդակցվելու պայմանակարգի վերահսկում և այլն: Նշված գործառույթների իրականացման ապահովման համար Նախարարության և Ծրագրի կազմում ընդգրկված թանգարանների միջև կնքված դրամաշնորհային պայմանագրերով սահմանված են «Պատվիրատու»-ի իրավունքները՝ ցանկացած ժամանակ ստուգել «Կատարող»-ի կողմից պայմանագրի կատարման ընթացքը և որակը, «Կատարող»-ից պահանջելու ստանալ տեղեկություններ պայմանագրի կատարման ընթացքի մասին: Պայմանագրով սահմանված են «Կատարող»-ի պարտավորությունները, որոնցից է՝ «Պատվիրատու»-ի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի մասին, ներկայացնել ֆինանսական և բովանդակային հաշվետվություն:

Նախարարության Վարչությունը նպատակային արդյունավետության տեսակետից չի տիրապետում այն տեղեկատվությանը, որն անհրաժեշտ է կանոնադրությամբ և պայմանագրերով վերոհիշյալ միջոցառումների համար սահմանված գործառույթների իրականացման մասով իրեն վերապահված խնդիրների լուծման համար (տես՝ սույն ընթացիկ եզրակացության Գլուխ 4, ենթակետեր 4.1 և 4.2):

3.2 Հաշվեքննության շրջանակներում առանձնացված հարցադրումներից 2-րդ հարցադրման մասով փաստվել է, որ Ծրագրի 2017-2019թթ. ժամանակահատվածների շրջանակներում Նախարարությունը և Վարչությունը (ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների գծով) տեղեկատվությունների համադրումներ, համեմատություններ, վերլուծություններ և մոնիթորինգ չեն իրականացնում, ինչի արդյունքներում ինչպես չեն

համընկնում ամփոփագրերի և ընդամենագրերի կտրվածքներով տարբեր շտեմարաններում առկա համասեռ տեղեկատվությունները, այնպես էլ՝ վերջիններիս սինթետիկ և անալիտիկ մակարդակներում ձևավորվում են իրար հակասող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշներ: Ծրագրի շրջանակներում դիտարկված ժամանակահատվածների համադրությունների, ինչպես նաև ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների միավորներին բաժին ընկնող վերլուծությունների արդյունքները, համեմատվող ժամանակահատվածների դինամիկայի համեմատությունները վկայում են, որ Նախարարությունը և Վարչությունը տարեկան կտրվածքներով ցուցանիշների ամփոփումներ և ընդհանրացումներ չեն իրականացնում (տես՝ սույն ընթացիկ եզրակացության Գլուխ 4, ենթակետեր 4.3 – 4.10):

Կատարողականի հաշվեքննության ժամանակ վերը ներկայացված և վերլուծված ընդհանուր թանգարանային հանրապետական ցուցանիշների և ըստ առանձին թանգարանների 2017–2019թթ. դինամիկայի կտրվածքի՝ չի իրականացվել համապատասխան տեղեկատվության բացակայության պատճառով:

3.3 Հաշվեքննության շրջանակներում առանձնացված հարցադրումներից 3-րդ հարցադրման մասով փաստվել է, որ Ծրագրում ընդգրկված թանգարանների աշխատակիցների մասով Նախարարությունը և Վարչությունը գործող իրավակարգավորումների շրջանակներում չեն վերահսկում ինչպես իրենց կողմից հաստատված անձնակազմերի հաստիքացուցակների մասնագիտական գործունեության արդյունավետությունը, այնպես էլ՝ միաժամանակ ամբողջ հաստիքով, որպես հիմնական աշխատողների տարբեր հաստատություններում ընդգրկվածությունը: Նախարարությունը և Վարչությունը չեն վերահսկում նաև հանրապետությունից որոշակի ժամանակահատվածով բացակայող աշխատակիցների համար հաշվարկվող և վճարվող աշխատավարձերը, ինչպես նաև՝ Ծրագրի թանգարանների կողմից իրականացվող գնումների ընթացակարգերը (տես՝ սույն ընթացիկ եզրակացության Գլուխ 4, ենթակետեր 4.11, Գլուխ 5 ենթակետեր 5.2 և 5.3):

4. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

4.1 Կատարողականի հաշվեքննության համար անհրաժեշտ և «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկատվությունը Նախարարությունից պահանջվել է, սակայն վերջինիս կողմից չի տրամադրվել 2017-2019 թթ. թանգարանների ոչ ֆինանսական, արդյունքային ցուցանիշ-չափորոշիչների մասով, որի

պատճառով հնարավոր չի եղել կատարողականի հաշվեքննության իրականացման ժամանակ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով սահմանված գործառույթները իրականացնել համաձայն նախատեսված ժամկետների և պահանջների, մասնավորապես՝ գնահատել ըստ առանձին թանգարանների կողմից իրականացվող «Պահպանվող թանգարանային և գրադարանային առարկաներ»-ի, դրանց համալրումների և վերականգնումների, սպասարկվող թանգարանային և գրադարանային այցելուների, ինչպես նաև կազմակերպվող ցուցահանդեսների վերաբերյալ առկա տեղեկատվության, ըստ նախորդ ժամանակաշրջանների հետ դինամիկայի և համապատասխան ֆինանսավորման պայմաններում հնարավոր տնտեսման, նպատակային և ծախսային արդյունավետության սկզբունքները գնահատելու համար: Նախարարության կողմից ներկայացվել է թանգարանների մասով միայն 2017-2019թթ. ամփոփ տեղեկատվություն (տես՝ Հավելված 2):

Հաշվեքննվողի պարզաբանումը. «Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ 2019թ. հունիսի 1-ից ՀՀ մշակույթի նախարարության լուծարման, Նախարարության հետ միավորման, կառուցվածքային ստորաբաժանումների և անձանց փոփոխությունների արդյունքում պահանջվող տեղեկատվությունը դարձել է անհասանելի (Նախարարության տեղեկանքը կցվում է)»:

Հաշվեքննողների մեկնաբանությունը Հաշվեքննության օբյեկտի ներկայացված պարզաբանումները չեն ընդունվում, քանի որ կառուցվածքային փոփոխություններով չի դադարել Նախարարության համապատասխան վարչության գործառույթները:

4.2 Նախարարությունից ստացված տեղեկատվության մեջ առկա են ոչ ամբողջական, թերի կամ ընդամենագրերի սխալ արձանագրման դեպքեր, թանգարանների հաստիքացուցակներում առկա են աշխատակիցների անհատական տվյալների, հանրային ծառայությունների համարանիշերի անճշտություններ, որոնց պատճառով հնարավոր չի եղել վերլուծել, համադրել, համեմատել և գնահատել ըստ առանձին թանգարանների գործառույթների նպատակային և ծախսային արդյունավետությունը: Մասնավորապես, թանգարանների և Նախարարության միջև կնքված դրամաշնորհի տրամադրման պայմանագրերի 1.1.1 և 1.1.3 ենթակետերով սահմանված Հավելված 1-ով և Հավելված 3-ով Կատարողը պարտավոր էր Պատվիրատուին տրամադրել, իսկ 2.1.1 ենթակետով՝ Պատվիրատուն պարտավոր էր Կատարողից պատշաճ ձևով ու կարգով ընդունել կանխատեսվող ցուցանիշների և դրանց կատարման վերաբերյալ պայմանագրերով սահմանված տեղեկատվությունը:

4.3 Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 2019թ. թիվ 254-Ն հրամանի և հաշվետվությունների՝ «LSREP» համակարգից ստացված ոչ ֆինանսական տվյալների միջև առկա են Նախարարության կողմից տրամադրված ընդամենագրերի և ըստ թանգարանների ներկայացված ամփոփ արդյունքային, քանակական ցուցանիշների անհամապատասխանություններ (տես՝ Հավելված 5):

4.4 Նախարարության Ծրագրի 2017-2019թթ. ընդհանուր կատարողականի գնահատման նպատակով դիտարկվել են 2017-2019թթ. Նախարարության ենթակայության թվով 21 թանգարանների² գծով տարեկան ֆինանսական ցուցանիշները և ոչ ֆինանսական, արդյունքային չափորոշիչները: Դիտարկված երկու ժամանակաշրջանների (2018-2017թթ. և 2019-2018թթ.) ֆինանսական ցուցանիշների վերլուծության արդյունքում ստացվում են համամասնությունների անհամապատասխանություններ (տես՝ Հավելված 3):

Հաշվեքննվողի պարզաբանումը. «2018-2017թթ. և 2019-2018թթ. ֆինանսական ցուցանիշները հաշվեքննության օբյեկտի կողմից նախապես սահմանված կարգով տրամադրվել էին ՀՀ հաշվեքննիչ պալատին, սակայն արձանագրության ներկայացումից հետո հաշվեքննության օբյեկտը դրանք ենթարկել է փոփոխության՝ առաջարկելով վերանայել արդյունքները»:

Հաշվեքննողների մեկնաբանությունը 2018-2017թթ. և 2019-2018թթ. ինչպես նախապես, այնպես էլ՝ վերանայված տեղեկատվությունների համադրությունների արդյունքների կտրվածքով դինամիկայի փոփոխությունները համարվում են ոչ էական (տես՝ Հավելված 1):

4.5 Ըստ Նախարարության 2018-2017թթ. ֆինանսական տվյալներից և ոչ ֆինանսական ամփոփ չափորոշիչներից հաշվարկված հարաբերական երեք ցուցանիշների դիտարկման պարզվել է, որ «Պահպանվող թանգարանային և գրադարանային առարկաներ»-ի մեկ պայմանական միավորին բաժին ընկնող տարեկան միջին գումարի 19 դրամով նվազման, պայմանական մեկ միավոր «Սպասարկվող թագարանային այցելու»-ին բաժին ընկնող տարեկան միջին գումարի 734 դրամով նվազման և պայմանական մեկ միավոր «Կազմակերպվող ցուցահանդեսներ»-ին բաժին ընկնող տարեկան միջին գումարի 3,216.0 հազ. դրամով նվազման պայմաններում 2018-2017թթ. թանգարանների ֆինանսավորման գումարները աճել են 89,307.8 հազ. դրամով (ըստ հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացված վերանայման՝ 107,358.7 հազ. դրամով):

² Փայտարվեստի թանգարան» ՊՈԱԿ-ը լուծարվել և միացվել է «Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական սրբեղծագործության կենտրոն» ՊՈԱԿ-ին 2020թ. փետրվարին:

4.6 Ըստ Նախարարության 2019-2018թթ. ֆինանսական տվյալներից և ոչ ֆինանսական ամփոփ չափորոշիչներից հաշվարկված հարաբերական երեք ցուցանիշների դիտարկման պարզվել է, որ «Պահպանվող թանգարանային և գրադարանային առարկաներ»-ի մեկ պայմանական միավորին բաժին ընկնող տարեկան միջին գումարի 53 դրամով աճի, պայմանական մեկ «Սպասարկվող թագարանային այցելու»-ին բաժին ընկնող տարեկան միջին գումարի 431 դրամով աճի և պայմանական մեկ միավոր «Կազմակերպվող ցուցահանդեսներ»-ին բաժին ընկնող տարեկան միջին գումարի 338.0 հազ. դրամով աճի պայմաններում 2019-2018թթ. թանգարանների ֆինանսավորման գումարները նվազել են 328,624.0 հազ. դրամով (ըստ հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացված վերանայման՝ 308,015.8 հազ. դրամով):

4.7 Հաշվեքննությամբ պարզվել է, որ Նախարարության Ծրագրի 2018թ. տարեկան ճշտված պլանը 2017թ. համեմատ նվազել է 114,437.2 հազ. դրամով, իսկ դրամարկղային ծախսը՝ 107,693.9 հազ. դրամով: Նախարարության Ծրագրի 2019թ. տարեկան ճշտված պլանը 2018թ. համեմատ աճել է 311,527.3 հազ. դրամով, իսկ դրամարկղային ծախսը՝ 294,042.9 հազ. դրամով:

4.8 Թանգարանների պահպանվող թանգարանային և գրադարանային առարկաների քանակը 2018թ.-ին 2017թ.-ի համեմատ նվազել է 48871-ով (2105184-2056313), սպասարկվող թանգարանային այցելուների քանակը 2018թ.-ին 2017թ.-ի համեմատ աճել է 121177-ով (1044457 - 923280), 2019թ.-ին 2018թ.-ի համեմատ աճել է 205427-ով (1249884 - 1044457), կազմակերպվող ցուցահանդեսների թիվը 2018թ.-ին 2017թ.-ի համեմատ նվազել է 91-ով (299 - 208), 2019թ.-ին 2018թ.-ի համեմատ աճել է 14-ով (222 - 208): Նախարարության ենթակայությամբ թվով 21 թանգարանների ոչ ֆինանսական, արդյունքային 2017-2019թթ. տարեկան ամփոփ չափորոշիչները ներկայացված են Հավելված 2-ում:

4.9 Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել է Նախարարության Ծրագրի 2019թ. թանգարանների դրամական միջոցների հոսքերը՝ ըստ տարեսկզբի և տարեվերջի մնացորդների, ինչպես նաև՝ գործառնական ծախսերն ու եկամուտները (տես՝ Հավելված 4), որոնց գծով ամփոփ տեղեկատվության վերլուծությունից պարզվեց.

- Ծրագրի 2019թ. տարեկան ծրագրային և փաստացի (դրամարկղային ծախսի) ցուցանիշների միջև դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը կազմել է -8,922.2 հազ. դրամ (245,643.4 - 254,565.6), իսկ տարեվերջի մնացորդը՝ -1,044,924.4 հազ. դրամ (3,432.8 - 1,048,357.2):

- Ծրագրի 2019թ. տարեկան գործառնական եկամուտների ծրագրային և փաստացի (դրամարկղային ծախսի) ցուցանիշների միջև տարբերությունը կազմել է +83,131.6 հազ. դրամ (3,714,121.2 - 3,630,989.6):

- Ծրագրի 2019թ. տարեկան գործառնական ծախսերի ծրագրային և փաստացի ցուցանիշների (դրամարկղային ծախսի) միջև տարբերությունը կազմել է -910,896.7 հազ. դրամ (2,819,743.7 - 3,730,640.4):

- Նախարարության Ծրագրի 2019թ. թանգարանների դրամական միջոցների տարեվերջի մնացորդը արձանագրվել է շուրջ մեկ միլիարդ դրամի չափով կուտակում՝ գործառնական եկամուտների աճի (83,131.6 հազ. դրամ) և գործառնական ծախսերի նվազման (910,896.7 հազ. դրամ) պայմաններում:

- Ծրագրի 2019թ. տարեկան գործառնական ծախսերի տարեկան ընդհանուր նվազման, այդ թվում՝ «Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման դիմաց վճարումներ» (տող 3.2) ծրագրային և փաստացի ցուցանիշների (դրամարկղային ծախսի) միջև -743,903.0 հազ. դրամ (528,394.1 - 1,272,697.1) տարբերությամբ, տարեկան ամփոփ ոչ ֆինանսական ցուցանիշների նախատեսվածի հանդեպ փաստացի չափորոշիչների գերազանցումների պայմաններում:

Հաշվեքննության օբյեկտը սույն եզրակացության արձանագրված թիվ 4.9 վերաբերյալ ներկայացրել է առարկություններ: Մասնավորապես՝

Հաշվեքննվողի պարզաբանումը. «Նախարարության Ծրագրի 2019թ. թանգարանների դրամական միջոցների տարեվերջի մնացորդի շուրջ մեկ միլիարդ դրամի չափով կուտակումը, գործառնական եկամուտների աճը (83,131.6 հազ. դրամ) պայմանավորված է թվով 13 թանգարանների կողմից արտաբյուջեի եկամուտների գերակատարումից, ինչպես նաև «Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ին միջոցառման իրականացման համար Նախարարությունից տրամադրված դրամաշնորհային գումարի հետ: Նախարարության Ծրագրի 2019թ. թանգարանների դրամական միջոցների տարեվերջի մնացորդի գործառնական ծախսերի նվազումը (910,896.7 հազ. դրամ), այդ թվում «Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման դիմաց վճարումներ» (տող 3.2) հոդվածով 743,903.0 հազ. դրամ (528,394.1 - 1,272,697.1) տարբերությամբ, պայմանավորված է ՀՀ կառավարության 2019թ. հուլիսի 11-ի «ՀՀ 2019թ. պետական բյուջում և ՀՀ կառավարության 2018թ. դեկտեմբերի 27-ի թիվ 1515 որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը գումար հատկացնելու մասին» թիվ 892-Ն որոշմամբ մի շարք կազմակերպություններին հատկացվել են գումարներ, այդ թվում 641,665,8 հազ. դրամ 2019թ. օգոստոսի 5-ի թիվ 345 դրամաշնորհային պայմանագրով «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ին՝ օդափոխության նոր համակարգ տեղադրման համար, որի պայմանագրով վերջնաժամկետ է սահմանված 2021թ. մայիսի 11-ը:

Մնացած 229.2 հազ. դրամի մեջ ներառված են նաև 2019թ. դեկտեմբեր ամսվա ՊՈԱԿ-ների կոմունալ վճարները և դրամական միջոցների ազատ մնացորդները»:

Հաշվեքննողների մեկնաբանությունը Հաշվեքննության օբյեկտի ներկայացված պարզաբանումները ընդունվել են մասամբ, քանի որ եթե առկա են թանգարանների տարեկերջի ազատ դրամական միջոցներ, 2019թ. դեկտեմբերի կոմունալ վճարումների հետաձգումներ, ինչպես նաև «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ին՝ օդափոխության նոր համակարգի տեղադրման համար տրամադրված դրամաշնորհ, միաժամանակ՝ ՊՈԱԿ-ների արտաբյուջեների հետ տեղեկատվության միասնական ներկայացման փաստ, ապա նշանակում է արտաբյուջեյի և պետական դրամաշնորհների միասին մեկնաբանությունները առկա չեն նախահաշիվնորում:

4.10 Նախարարությունից ըստ թվով 21 թանգարանների 2019թ. ստացված ամփոփ ֆինանսական ցուցանիշների մասին տեղեկատվության՝ ընդամենագրերի և ՀՀ Ֆինանսների նախարարության շտեմարանների ամփոփագրերի 2019թ. տարեկան կտրվածքով առաջանում են տարբերություններ (տես՝ Հավելված 5):

4.11 Նախարարության Ծրագրում ըստ թանգարանների կողմից տրամադրված տեղեկատվության և կատարված համադրումների արդյունքում պարզվել է, որ թվով 15 թանգարանների թվով 120 աշխատակիցներ ըստ Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ ՍԵԿՏ) և Նախարարության միասնական շտեմարանի (այսուհետ՝ Բազա) հետ համադրման արդյունքների 2019թ. ավելի քան հինգ աշխատանքային օրերով³ բացակայել են հանրապետությունից: Նշված աշխատակիցներին աշխատաժամանակի հաշվարկի համապատասխան ամիսների տեղեկագրերում (տաբելներ) արձանագրվել են ներկայությունները, հաշվարկվել է ընդամենը՝ 4,253,909.6 դրամ աշխատավարձ և կատարվել վճարումներ (տես՝ Հավելված 6): Համադրման արդյունքներում չեն նույնականացվել ընդհանուր թվով 40 անձանց տվյալներ:

ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից սույն ընթացիկ եզրակացության մեջ ներկայացված թվով 11 անհամապատասխանությունների և թվով 3 այլ փաստերի վերաբերյալ հաշվեքննության օբյեկտը թվով 8-ի մասով առարկություններ չի ներկայացրել: Հաշվեքննության օբյեկտը թվով 2 անհամապատասխանությունների և այլ փաստերի

³ Մինչև հինգ օրերով բացակայությունը հանվել է համադրման տվյալներից՝ հաշվի առնելով աշխատանքային օրերի հետ ոչ աշխատանքային և տոնական օրերի իրար հաջորդելով պայմանավորված հնարավոր համընկնումները:

վերաբերյալ ներկայացված առարկությունները հաշվեքննողների կողմից չեն ընդունվել, իսկ թվով 1-ի մասով՝ ընդունվել է մասամբ:

Կից ներկայացվում է Նախարարության հաշվեքննության արձանագրությունների վերաբերյալ պատասխան գրությունը (7 էջ):

5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

5.1 Նախարարության Ծրագրի կատարողականի հաշվեքննության ընթացքում նպատակային և ծախսային արդյունավետության, ինչպես նաև տնտեսման գործառույթների գնահատման նպատակով ընտրանքային կարգով ուսումնասիրվել են թվով երկու թանգարանների կողմից 2019թ. իրականացված գնումների գործընթացները: Կատարված գնումներով ձեռքբերումները թանգարանների կանոնադրություններով և Նախարարության հետ կնքված դրամաշնորհի տրամադրման պայմանագրերով սահմանված պահանջների կատարման տեսանկյունից չնայած հիմնականում համապատասխանում են նպատակային և ծախսային արդյունավետության ապահովման ընթացակարգերին, սակայն գնումների գործընթացներում արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ: Մասնավորապես.

«Հովի. Թումանյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ-ի կողմից 2019թ. ընթացքում կատարված գնումների գործընթացում հայտարարվել է գնում «Գնանշման հարցում» ընթացակարգով թվով

10 չափաբաժիններով՝ 23,132.6 հազ. դրամ գումարի չափով, իսկ «Մեկ անձից գնում» գնման ընթացակարգով թվով 105 չափաբաժիններով՝ 14,890.3 հազ. դրամ գումարի չափով: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ.

- «Գնանշման հարցում» ընթացակարգով, ՀԹԹ-ԳՀԾՁԲ-2019/07 ծածկագրով կատարված գնման ընթացքում «Procurement.am» տեղեկագրում (այսուհետ՝ Տեղեկագիր) չի հրապարակվել «Կնքված պայմանագրի մասին» հայտարարությունը: Առկա է անհամապատասխանություն 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների հետ:

- «Գնանշման հարցում» ընթացակարգով, ՀԹԹ-ԳՀԱՇՁԲ-2019/2 ծածկագրով կատարված գնման ընթացքում հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված տարբերակը Տեղեկագրում հրապարակվել է երեք օր ուշացումով: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 7-րդ բաժնի 43-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների հետ:

- Գնումների պլանում ընդգրկված, գնումների միասնական անվանացանկով սահմանված թվով 44 միջանցիկ ծածկագրեր չեն լրացվել 4-րդ մակարդակին համապատասխան: Առկա է անհամապատասխանություն Որոշման հավելված 3-ի 2-րդ բաժնի 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների հետ:

- Բացակայում են գնման նպատակով կատարված գործողությունների և դրանց հիմքերի վերաբերյալ էլեկտրոնային փաստաթղթերը, մասնավորապես՝ մասնակիցներին ուղարկված հրավերները: Առկա են անհամապատասխանություններ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի և Որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի 2-ին ենթակետի պահանջների հետ:

- «Հովի. Թումանյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ-ը 2019 թվականի տարեկան գնումների պլանով նախատեսված հեռախոսային և համացանցային ծառայությունների մասով գնում չի հայտարարել, շարունակել է օգտվել ծառայություններից՝ նախորդ տարիներին կնքված պայմանագրերի հիման վրա: Առկա են անհամապատասխանություններ Օրենքի 2-րդ հոդվածի 1-րդ մասի 1-ին կետի գ) ենթակետի, 3-րդ և 4-րդ կետերի պահանջների հետ:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել է Նախարարության ենթակայության «Ավ. Իսահակյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ-ի կողմից 2019 թվականի ընթացքում կատարված գնումների գործընթացը, ըստ որի հայտարարվել է գնում բացառապես «Մեկ անձից գնում» գնման ընթացակարգով թվով 165 չափաբաժիններով՝ 3,388.5 հազ. դրամ գումարի չափով: Բացակայում են գնման նպատակով կատարված գործողությունների և դրանց հիմքերի վերաբերյալ էլեկտրոնային փաստաթղթերը, մասնավորապես՝ մասնակիցներին ուղարկված հրավերները: Առկա են անհամապատասխանություններ Օրենքի

9-րդ հոդվածի 3-րդ մասի և Որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի 2-ին ենթակետի պահանջների հետ:

5.2 Հաշվետու ժամանակաշրջանի Նախարարության ենթակայության թվով 21 թանգարանների հաստիքային աշխատակիցների թիվը կազմել է 1183 աշխատակիցներ, որից միայն 570-ը կամ 48,2%-ը են հանդիսանում են թանգարանային բնագավառի մասնագիտական գործառույթներ իրականացնող աշխատակիցներ (գիտաաշխատողներ, ֆոնդապահներ, էքսկուրսավարներ, մատենագիրներ, գրադարանավարներ և այլն), իսկ Ծրագրի մնացած 613-ը կամ 51,8%-ը՝ օժանդակ, տեխնիկական, տնտեսական և սպասարկող անձնակազմի այլ աշխատակիցներ են: Ըստ Ծրագրի թանգարանների հաստիքների մասնագիտական և ոչ մասնագիտական աշխատակիցների պատկերը ներկայացված է հավելված 7-ում:

5.3 Նախարարության Ծրագրի թվով 12 թանգարանների թվով 107 աշխատակիցների դեպքում արձանագրվել են նույն կազմակերպությունում և նույն հասցեներում հաշվառվելու փաստեր, իսկ թվով 3 հաստիքային աշխատողներ 2019թ. միաժամանակ որպես հիմնական աշխատողներ ամբողջ դրույքով աշխատել են Ծրագրում ընդգրկված երկու տարբեր թանգարաններում (տես՝ Աղյուսակ 8): Նախարարության ենթակայության թվով 7 թանգարանների թվով 15 աշխատակիցներ 2019թ. միաժամանակ աշխատել են նաև Նախարարության ենթակա այլ կառույցներում և հաստատություններում (քոլեջներ, ուսումնարաններ, թատրոններ, նվագախմբեր և այլն):

6. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկվում է Նախարարությանը.

6.1 Քննարկել և լուծումներ առաջարկել Նախարարության կողմից հաստատված Ծրագրի կազմակերպությունների կանոնադրություններով, Նախարարության հետ կնքված դրամաշնորհային և սուբսիդիայի պայմանագրերով սահմանված Նախարարությանը ներկայացվող հաշվետվությունների տվյալների ստուգման, գործառույթների և ֆինանսական և ոչ ֆինանսական, արդյունքային ցուցանիշների ճշգրտության, իրավասության և արժանահավատության գործառույթները վերահսկելու ուղղությամբ:

6.2 Միջոցառումներ ձեռնարկել և ստեղծել այնպիսի վերահսկողական մեխանիզմներ, որոնցով կբացառվեն Նախարարության ենթակա Ծրագրի կազմակերպությունների կողմից գնումների գործընթացներում անհամապատասխանությունները:

6.3 Ներդնել վերահսկողական այնպիսի գործիքակազմեր, որոնց կիրառմամբ կվերահսկվեն Նախարարության ենթակա Ծրագրի կազմակերպությունների աշխատակիցների կողմից ՍԷԿՏ համակարգով սահմանահատումների

ժամանակահատվածներում բացակայությունները աշխատաժամանակի հաշվարկման տեղեկագրերում արձանագրման աշխատանքները՝ աշխատավարձերի հաշվարկման և վճարման անհամապատասխանությունները, ինչպես նաև՝ հիմնական հաստիքներով տարբեր հաստատություններում կրկնակի աշխատանքները բացառելու նպատակով:

6.4 Մինչև «Թանգարանների և Հայաստանի Հանրապետության թանգարանային առարկաների մեկ միասնական հավաքածուի մասին» և հարակից օրենքների, վերջինիս կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի նախագծերի ընդունումը, առաջնորդվել գործող իրավակարգավորումների շրջանակներում գործող չափորոշիչներով:

6.5 Հսկողություն սահմանել «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկատվության տրամադրման ժամկետների, ամբողջականության, լիարժեքության և պահանջված ձևաչափերով տրամադրման վրա:

6.6 Ընթացիկ եզրակացությունում ներկայացված վերոնշյալ առաջարկությունների հիման վրա մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանումներ և միջոցառման կատարման ժամանակացույց:

7. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

Նախարարության 2017 – 2019թթ. ամփոփ ֆինանսական ցուցանիշների դինամիկա

(հազ. դրամ)

Թիվ	Ցուցանիշներ	Ըստ Նախարարության տրամադրված տեղեկատվության	2017 թ.	2018 թ.	2019 թ.	2017-2018 թթ. դինամիկա (+, -)	2018-2019 թթ. դինամիկա (+, -)	2017-2019 թթ. ընդհանուր դինամիկա (+, -)
1	2	3	4	5	6	7	8	9
1	Տարեկան սպեղանիք	Սկզբնական	1,605,485.8	1,488,948.6	1,808,475.9	116,537.2	-319,527.3	436,064.5
		Վերանայված	1,622,284.2	1,522,148.6	1,837,675.9	100,135.6	-315,527.3	415,662.9
		Տարբերություն (+, -)	16,798.4	33,200.0	29,200.0	-16,401.6	4,000.0	-20,401.6
2	Հշտված սպեղանիք	Սկզբնական	1,603,385.8	1,488,948.6	1,800,475.9	114,437.2	-311,527.3	425,964.5

		Վերանայված	1,619,384.8	1,512,048.6	1,837,675.9	107,336.2	-325,627.3	432,963.5
		Տարբերություն (+ , -)	15,999.0	23,100.0	37,200.0	-7,101.0	-14,100.0	6,999.0
3	Փաստացի ֆինանսական ցուցանիշներ	Սկզբնական	1,578,256.4	1,488,948.6	1,817,572.6	89,307.8	-328,624.0	417,931.8
		Վերանայված	1,619,326.8	1,511,968.5	1,819,984.3	107,358.3	-308,015.8	415,374.1
		Տարբերություն (+ , -)	41,070.4	23,019.9	2,411.7	18,050.5	20,608.2	-2,557.7
4	Դրամարկային ծախսեր	Սկզբնական	1,586,256.4	1,470,592.5	1,764,635.5	115,663.9	-294,043.0	409,706.9
		Վերանայված	1,619,326.6	1,493,591.4	1,781,941.3	125,735.2	-288,349.9	414,085.1
		Տարբերություն (+ , -)	33,070.2	22,998.9	17,305.8	10,071.3	5,693.1	4,378.2
5	Փաստացի ծախսեր	Սկզբնական	1,586,204.1	1,474,362.6	1,713,549.2	111,841.5	-239,186.6	351,028.1
		Վերանայված	1,613,648.2	1,502,965.7	1,737,748.9	110,682.5	-234,783.2	345,465.7
		Տարբերություն (+ , -)	27,444.1	28,603.1	24,199.7	-1,159.0	4,403.4	-5,562.4
1	2	3	4	5	6	7	8	9
6	Կատարված աշխատանքների (ֆինանսական ցուցանիշներ) (%)	Սկզբնական	98.4	100.0	100.9	-1.6	-0.9	-2.5
		Վերանայված	99.9	99.9	99.9	0.0	0.0	0.0
		Տարբերություն (+ , -)	1.5	-0.1	-1.0	-1.6	-0.9	-2.5
7	Կատարվող աշխատանքներ (որամարկային ծախսերի հաշվառման վրա) (%)	Սկզբնական	98.4	98.8	98.0	-0.4	0.8	0.4
		Վերանայված	99.9	98.8	96.9	1.1	1.9	3.0
		Տարբերություն (+ , -)	1.5	0.0	-1.1	1.5	1.1	2.6

Հավելված 2

Նախարարության Ծրագրի ոչ ֆինանսական, արդյունքի չափորոշիչների վերաբերյալ

Արդյունքի չափորոշիչներ	Տարիներ	Ճշտված պլան	Փաստացի	Տարբե- րությունը (+,-)
1	2	3	4	5
1. Պահպանվող թանգարանային առարկաներ (քանակ) (2017 թ. տրոհում ներառված են նաև պահպանվող գրադարանային առարկաների քանակը)	2017	2100874	2105184	+ 4310
	2018	1867000	1869405	+ 2405
	2019	1871000	1876655	+ 5655
2. Պահպանվող գրադարանային առարկաներ (թիվ) (2017 թ. պահպանվող գրադարանային առարկաների քանակը ներառված է «Պահպանվող թանգարանային առարկաներ» տրոհում)	2017	--	--	--
	2018	240000	186908	- 53092
	2019	240000	241342	+ 1342
3. Սպասարկվող թանգարանային այցելուներ (քանակ)	2017	552700	923280	+ 370580
	2018	800000	1044457	+ 244457
	2019	800000	1249884	+ 449884
1	2	3	4	5
4. Սպասարկվող գրքեր (միավոր)	2017	282500	0	- 282500
	2018	282500	2637	-2 79863
	2019	2000	3016	+ 1016
5. Սպասարկվող ընթերցողներ (քանակ)	2017	6010	0	- 6010
	2018	6010	888	- 5122
	2019	600	972	+ 372
6. Ձեռքբերված գրադարանային միավորներ (թիվ)	2017	1400	0	- 1400
	2018	1400	44	- 1356
	2019	100	112	+ 12
7. Թանգարանային առարկաների համալրում (թիվ) (2017 և 2018 թթ. նշված ցուցանիշը չի համարվել չափորոշիչ, որա փոխարեն նշվել է «Մշակութային արժեքների էլեկտրոնային փոփոխական շտեմարանում մուտքագրված արժեքների քանակ» -ը, որի ավարտը ձևակերպվել է 2019թ. առաջին եռամսյակում)	2017	--	--	--
	2018	--	--	--
	2019	4000	8561	+ 4561
8. Կազմակերպվող ցուցահանդեսներ (թիվ)	2017	217	299	+ 82

	2018	250	208	- 42
	2019	260	222	- 38
9. Թանգարանային առարկաների վերականգնում (թիվ) (2017 և 2018 թթ. նշված ցուցանիշը չի համարվել չափորոշիչ)	2017	--	--	--
	2018	--	--	--
	2019	500	421	- 79
10. Վերապատրաստումներ (քանակ) (2017 և 2018 թթ. նշված ցուցանիշը չի համարվել չափորոշիչ)	2017	--	--	--
	2018	--	--	--
	2019	2	2	0
11. Վերապատրաստումներին մասնակցած մասնագետներ (քանակ)	2017	40	102	+ 62
	2018	40	25	- 15
	2019	40	50	+ 10
12. Վերապատրաստման միջին տևողություն (ժամ) (2017 և 2018 թթ. նշված ցուցանիշը չի համարվել չափորոշիչ)	2017	--	--	--
	2018	--	--	--
	2019	24	24	0

Նախարարության Ծրագրի ամփոփ ֆինանսական տվյալների և ոչ ֆինանսական, արդյունքի չափորոշիչների հարաբերական ցուցանիշների դինամիկայի վերլուծություն

Թիվ	Ցուցանիշներ	2017 թ.			2018 թ.			2019 թ.			2017-2018 թթ. դինամիկա			2018-2019 թթ. դինամիկա		
		Ճշտված պլանով	Փաստացի	Տարբերությունը (+,-)	Ճշտված պլանով	Փաստացի	Տարբերությունը (+,-)	Ճշտված պլանով	Փաստացի	Տարբերությունը (+,-)	Հստակ պլաններ	Հստակ պլաններ	Հստակ տարբերություն (+,-)	Հստակ պլաններ	Հստակ տարբերություն (+,-)	Հստակ տարբերություն (+,-)
1	Պահպանվող թանգարանային և գրադարանային առարկաների մեկ պայմանական միավորին բաժին ընկնող տարեկան միջին գույք (ՀՀ դրամ)	763	753	-10	707	716	9	853	809	-44	56	37	-19	-146	-93	53
2	Պայմանական մեկ սպասարկվող թագարանային այցելուին բաժին ընկնող տարեկան գույք (ՀՀ դրամ)	2901	1718	-1183	1861	1412	-449	2251	1371	-880	1040	306	-734	-390	41	431
3	Պայմանական մեկ միավոր ցուցանանքին բաժին ընկնող տարեկան միջին գույք (հազ. դրամ)	7,389.0	5,305.0	-2,084.0	5,956.0	7,088.0	1,132.0	6,925.0	7,719.0	794.0	1,433.0	-1,783.0	-3,216.0	-969.0	-631.0	338.0

2019թ. Նախարարության Ծրագրի դրամական հոսքերի (գործառնական ծախսեր և գործառնական եկամուտներ)

(հազ. դրամ)

Թիվ ծածկագիր	Ցուցանիշներ	Հաշվետու ժամանակաշրջանի ծրագրային ցուցանիշը	Հաշվետու ժամանակաշրջանի փաստացի (դրամարկղային) ցուցանիշը	Ծրագրային և փաստացի ցուցանիշների միջև տարբերությունը	Ժամկետանց պարտավորություններ
1	2	3	4	5	6
1	Դրամական միջոցների տարեսկզբի (հաշվետու ժամանակաշրջանի սկզբի) մնացորդը	245,643.4	254,565.6	-8,922.2	

2

Գ ո Ր Ծ ա ռ ն ա կ ա ն ե կ ա մ ու տ ն ե ր

2.1	Եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում	886,962.6	923,315.4	-36,352.8	
2.1.1	Բյուջեներից ստացվող եկամուտներ, այդ թվում	6,352.7	7,852.7	-1,500.0	
2.1.1.1	Եկամուտներ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից	6,352.7	7,852.7	-1,500.0	
2.1.1.2	Եկամուտներ համայնքների բյուջեներից	0.0	0.0	0.0	
2.1.2	Այլ աղբյուրներից ստացվող եկամուտներ, այդ թվում	880,609.9	915,462.7	-34,852.8	
2.1.2.1	Ապրանքների մատակարարումից, այդ թվում	101,121.4	96,349.0	4,772.4	
2.1.2.1.1	Պետական ոչ առևտրային կազմակերպություններից	2,271.4	1,739.2	532.2	
2.1.2.1.2	Այլ աղբյուրներից	98,850.0	94,609.8	4,240.2	
2.1.2.2	Ծառայությունների մատուցումից, այդ թվում	779,488.5	819,113.7	-39,625.2	
2.1.2.2.1	Պետական ոչ առևտրային կազմակերպություններից	0.0	11,448.0	-11,448.0	
2.1.2.2.2	Այլ աղբյուրներից	779,488.5	807,665.7	-28,177.2	
2.2	Դրամաշնորհների ձևով ստացվող եկամուտներ, այդ թվում	2,668,433.1	2,727,331.3	-58,898.2	
2.2.1	Բյուջեներից ստացվող դրամաշնորհներ, այդ թվում	2,629,382.0	2,637,540.7	-8,158.7	
2.2.1.1	Դրամաշնորհներ ՀՀ պետական բյուջեից	2,629,382.0	2,637,540.7	-8,158.7	
2.2.1.2	Դրամաշնորհներ համայնքների բյուջեներից	0.0	0.0	0.0	
2.2.2	Օգտարերկրյա կառավարություններից ստացվող դրամաշնորհներ	3,409.0	2,911.0	498.0	
1	2	3	4	5	6

2.2.3	Միջազգային կազմակերպություններից ստացվող դրամաշնորհներ	0.0	21,246.9	-21,246.9	
2.2.4	Այլ դրամաշնորհներ	35,642.1	65,632.7	-29,990.6	
2.3	ՀՀ Պետական բյուջերից ստացվող սուբսիդիաներ	0.0	0.0	0.0	
2.4	Գործառնական այլ եկամուտներ	75,593.9	63,474.5	12,119.4	
2.5	Ընդամեն՝ գործառնական եկամուտներ	3,630,989.6	3,714,121.2	-83,131.6	

3

Գ ո Ր Ծ ա ռ ն ա կ ա ն ծ ա խ ս ե Ր

3.1	Աշխատանքի վարձատրություն և դրան հավասարեցված վճարումներ	1,759,999.2	1,721,266.3	38,732.9	
3.2	Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման դիմաց վճարումներ, այդ թվում	1,272,297.1	528,394.1	-	
3.2.1	Պետական ոչ առևտրային կազմակերպություններին	450.0	450.0	0.0	
3.2.2	Այլ	1,271,847.1	527,944.1	743,903.0	
3.3	Դրամաշնորհներ և այլ տրանսֆերտներ, այդ թվում	117,111.1	88,422.2	28,688.9	
3.3.1	Պետական ոչ առևտրային կազմակերպություններին	38,316.4	34,016.4	4,300.0	
3.3.2	Այլ	78,794.7	54,405.8	24,388.9	
3.4	Սոցիալական նպաստներ, այդ թվում	0.0	0.0	0.0	
3.4.1	Կենսաթոշակներ	0.0	0.0	0.0	
3.4.2	Կրթաթոշակներ	0.0	0.0	0.0	
3.4.3	Այլ նպաստներ	0.0	0.0	0.0	
3.5	Այլ ծախսեր, այդ թվում	581,233.0	481,660.8	99,572.2	
3.5.1	Հարկեր, պարտադիր վճարներ, տույժեր, տուգանքներ, այդ թվում	551,450.8	461,965.2	89,485.6	
3.5.1.1	Բյուջեներ կատարվող վճարումներ, այդ թվում	551,413.8	461,960.0	89,453.8	
3.5.1.1.1	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, այդ թվում	541,885.3	461,285.4	80,599.9	
3.5.1.1.1.1	Հարկեր և փոփոխություններ	329,428.3	249,526.3	79,902.0	
3.5.1.1.1.2	Այլ	212,457.0	211,759.1	697.9	
1	2	3	4	5	6
3.5.1.1.2	Համայնքների բյուջեներ, այդ թվում	9,528.5	674.6	8,853.9	

3.5.1.1.2.1	Հարկեր և փուրքեր	9,500.0	646.1	8,853.9	
3.5.1.1.2.2	Այլ	28.5	28.5	0.0	
3.5.1.2	Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ	37.0	5.2	31.8	
3.5.2	Բնական աղետների կամ այլ բնական վնասների վերականգնում	0.0	0.0	0.0	
3.5.3	Գործառնական այլ ծախսեր, այդ թվում	29,782.2	19,695.6	10,086.6	
3.5.3.1	Այլ ընթացիկ ծախսեր	29,782.2	19,695.6	10,086.6	
3.5.3.2	Այլ կապիտալ ծախսեր	0.0	0.0	0.0	
3.6	Ընդամենը՝ գործառնական ծախսեր	3,730,640.4	2,819,743.4	910,897.0	

4	Ընդամենը դրամական միջոցների հավելուրդ (պակասուրդ) գործառնական գործունեությունից	-99,650.8	897,377.5	-997,028.3	
5	Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	-142,559.8	-87,208.3	-55,351.5	
5.1	Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	0.0	0.0	0.0	
5.2	Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր	142,559.8	87,208.3	55,351.5	
6	Ընդամենը դրամական միջոցների հավելուրդ (պակասուրդ)	-242,210.6	-810,169.2	567,958.6	
7	Դրամական այլ հոսքեր	0.0	-13,377.6	13,377.6	
7.1	Դրամական միջոցների այլ մուտքեր	0.0	5,361.4	-5,361.4	
7.2	Դրամական միջոցների այլ ելքեր	0.0	18,739.0	-18,739.0	
8	Դրամական միջոցների պաշարների զուտ փոփոխություն	-242,210.6	-823,546.8	581,336.2	
9	Դրամական միջոցների տարեվերջի (հաշվետու ժամանակաշրջանի վերջի) մնացորդը	3,432.8	1,048,357.2	-1,044,924.4	

Հավելված 5

Նախարարության 2019թթ. ամփոփ ֆինանսական ցուցանիշներ

(հազ. դրամ)

Տեղեկատվության աղբյուրը	Պլան	Ճշտված պլան	Փաստացի ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
Նախարարության տրամադրված ընդամենագրեր	1,800,475.9	1,800,475.9	1,817,572.6	1,764,635.4	1,713,549.2
ՀՀ ֆինանսների նախարարության շտեմարաններ	1,837,675.9	1,837,675.9	1,819,984.3	1,781,941.3	1,737,748.9
Տարբերություն	37,200.0	37,200.0	2,411.7	17,305.9	24,199.7

Հավելված 6

Նախարարության թանգարանների աշխատակիցների 2019թ. ընթացքում ՀՀ-ից բացակայելու վերաբերյալ

Թիվ	Թանգարաններ	Հանրապետությունից բացակայող աշխատակիցների թիվը (մարդ)	Բացակայած աշխատանքային օրերի ընդհանուր քանակը (օր)	Հաշվարկված աշխատավարձ՝ բացակայած օրերի համար (ՀՀ դրամ)
1	2	3	4	5
1	«Ավ. Իսահակյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ	2	16	61,417.0
2	«Ա. Խաչատրյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ-	1	5	3,982.3
3	«Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան» ՊՈԱԿ	14	129	523,491.9
4	«Ե. Չարենցի տուն-թանգարան» ՊՈԱԿ	1	2	8,076.0
5	. «Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ-	1	7	41,860.0
6	«Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ	14	71	553,021.5
7	«Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարան» ՊՈԱԿ	1	7	16,667.0
1	2	3	4	5
8	«Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ	30	175	1,009,546.7

9	«Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ	8	28	120,618.0
10	«Հովի. Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոն» ՊՈԱԿ	16	112	610,297.2
11	«Հովի. Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ	5	37	145,688.2
12	«Պատմամշակութային արգելոց- թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ	4	31	183,294.1
13	«Ռուսական արվեստի թանգարան» ՊՈԱԿ	11	75	385,470.0
14	«Սերգեյ Փարաջանովի թանգարան» ՊՈԱԿ	8	60	491,115.6
15	«Փայտարվեստի թանգարան» ՊՈԱԿ	4	25	99,364.1
Ընդամենը՝		120	780	4,253,909.6

Հավելված 7

Նախարարության 2019թ. թանգարանների հաստիքների որակական կազմի
վերաբերյալ

Թիվ	Թանգարաններ	Հաստիքների թիվը (նույնակա- նացված)	Մասնագիտական աշխատակիցներ		Ոչ մասնագիտական աշխատակիցներ	
			Թիվը (մարդ)	Տեսակա- րար կշիռը (%)	Թիվը (մարդ)	Տեսակա- րար կշիռը (%)
1	2	3	4	5	6	7
1	«Ավ. Իսահակյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ	19	13	68.4	6	31.6
2	«Ա. Խաչատրյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ	26	11	42.3	15	57.7
3	«Ավ. Սպենդիարյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ	16	10	62.5	6	37.5
4	«Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան» ՊՈԱԿ	92	59	64.1	33	35.9
5	«Ե. Չարենցի տուն-թանգարան» ՊՈԱԿ	15	10	66.7	5	33.3
6	«Երվանդ Քոչարի թանգարան» ՊՈԱԿ	19	14	73.7	5	26.3
1	2	3	4	5	6	7
7	«Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ	19	7	36.8	12	63.2
8	«Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ	106	63	59.4	43	40.6

9	«Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարան» ՊՈԱԿ	16	9	56.3	7	43.8
10	«Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ	231	101	43.7	130	56.3
11	«Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ	105	54	51.4	51	48.6
12	«Հովի. Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոն» ՊՈԱԿ	70	53	75.7	17	24.3
13	«Հովի. Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ	18	6	33.3	12	66.7
14	«Հրազդանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ	9	3	33.3	6	66.7
15	«Մ. Սարյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ	15	7	46.7	8	53.3
16	«Ն. Ադոնցի անցան Սիսիանի պատմության թանգարան» ՊՈԱԿ	8	5	62.5	3	37.5
17	«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ	343	113	32.9	230	67.1
18	«Ռուսական արվեստի թանգարան » ՊՈԱԿ	17	10	58.8	7	41.2
19	«Սերգեյ Փարաջանովի թանգարան» ՊՈԱԿ	16	9	56.3	7	43.8
20	«Փայտարվեստի թանգարան» ՊՈԱԿ	12	7	58.3	5	41.7
21	«Օրբելի եղբայրների տուն-թանգարան» ՊՈԱԿ	11	6	54.5	5	45.5
Ընդամենը՝		1183	570	48.2	613	51.8

Հավելված 8

Նախարարության Ծրագրի 2019թ. թանգարաններում միաժամանակ հիմնական հաստիքով աշխատողների վերաբերյալ

Թիվ	Աշխատողների հաստիքները	Թ ա ն գ ա ր ա ն ն ե ր
1	Բաժնի վարիչ	«Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան» ՊՈԱԿ
	Կազմակերպիչ	«Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ
2	Գիտական քարտուղար	«Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան» ՊՈԱԿ
	Բաժնի մասնագետ	«Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ
3	Գլխավոր հաշվապահ	«Երվանդ Քոչարի թանգարան» ՊՈԱԿ
	Գլխավոր հաշվապահ	«Ալ. Սպենդիարյանի տուն- թանգարան» ՊՈԱԿ